


89171  
UF-92



30 OCT 2006

Առաջնային գրքը 25 NOV 2010

891.71

Մ-92

ար

ԿՍԵՆԻԱ ՄՈՐՈԶՈՎԱՅԻ

ԲԵՇԱՐԻ ԶԵԽՉԵԽԻՆԻ ԵՆ

ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ԹԵՒԵՐԸ

1002  
5383

Թարգմ. Օսկովք Գևեցեանի



Սահմանադրության պահպան

1911

04.07.2013

12171



ԻՆՉՈՐԻ ԶԱԽԱԶԱԽԱՆԱՅԻ ԵՐ ԵՐՁԱՆ-  
ԿՈՒԹԵՍԱՆ ԹԵՒԵՐԲ

Կամնիակ Մօրօզօվայի

Շատ հին ժամանակներում ամբողջ եր-  
կրագունդը ներկայացնում էր մի հրաշա-  
լի պարտէզ:

Ամեն ինչ ծաղկում էր և անուշահո-  
տութիւն բուրում: Նրա բնակիչները ի-  
րանց շրջապատող բնութիւնից պակաս  
հոյակապ չէին: Նրանց աչքերը արտացո-  
լում էին թափանցիկ եռկնակամաքի կա-  
պուտակը, իսկ հոգիները—լճերի և առու-  
ների բիւրեղանման մաքուր ջրերը:

Բայց այդ զմայլելի պարտէզի գեղեցկագոյն զարդը մի փոքրիկ հրաշագործ թռչնակ էր, որին Երջանկութիւն էին անւանում:

Երբոր հնչում էր նրա ներդաշնակ ձայնը բարձունքների վրայ և օդը լցւում էր ուրախ դայլայլիկներով՝ մարդիկ յափշտակւում էին և տարւում հեռու, հեռու, մինչև արեգակը, և նրանց թւում էր, թէ իրանց ամբողջ ներքին աշխարհը ողողւած է լոյսի պայծառ ճաճանչումներով: Իսկ երբոր թռչնակը մէկ թփից միւսն էր թռչկոտում, նրանք ցանկանում էին յաւիտեան կանգնած մնալ և ակնապիշ նայել նրան, այդ թանկագին, եթերային թևերով թռչնակին:

Բայց յանկարծ նրանց մէջ երեաց մի մարդ, որը, ըստ երեսյթին, եկել էր մի անծանօթ, հեռու աշխարհից: Նրա աչքերում ցոլանում էր գիշերային մութ եր-

կինքը, նրա գունատ դէմքը լուսաւորող աշերի հայեացքը փայլատակում էր ինչպէս ամպերում տըաքող կայծակը: Նրա գլխի շուրջը թափւած էին սև մազերը, փայլակով լուսաւորւած ամպերի կտորտանքների նման:

Մարդը գնում էր հրաշագեղ պարտէզի միջով: Բայց նրա սիրտը չէր հրճում շրջապատող գեղեցկութիւնով: Նրա հոգին լի էր նախանձով և Զարութեամբ:

Յանկարծ, նրա գլխի վրայով տարածւց մի երգեցողութիւն, մի այնքան դիւթիչ երգեցողութիւն, որի նմանը նա երբէք իր կեանքում չէր լսել: Ամբողջ ներքին աշխարհը լցւեց մի ինչ որ քաղցր լքումով: Յանկարծ ցանկացաւ կանգնել այդտեղ, անշարժ, երկար, երկար ամբողջ իր կեանքը կանգնել և մնալ՝ լսելու անսահմանօրէն հրաշալի երգեցողութիւնը:

Բայց երգեցողութիւնը ընդհատւեց, և

մոայլ աչքերով մարդը, բարձրացնելով  
գլուխը, տեսաւ փոքրիկ յանկուցիչ թըռչ-  
նիկին, որ նստած էր ծառի վրայ ճիշտ  
իր գլխի վերև։ Կարծես նա լինէր ծիրա-  
նի գօտու կենդանի մի կտորը—այնքան  
փայլում, պսպուղում էին, և կուրացնելու  
չափ վառւում էին գեղեցկութեամբ այդ  
նուրբ արարածի բոլոր փետուրները։

Նա պէտք է իմը լինի, — մըմնջաց  
մարդը։ Նա չպիտի երգէ ուրիշների հա-  
մար։ Ես կը նստացնեմ նրան վանդակում  
և մենակս կը վայելեմ նրա գեղեցկու-  
թիւնը, նա կերգի ինձ համար, միայն ինձ  
համար։

Եւ ազահութեամբ ու արագ մեկնեց  
ձեռքը։ Փոքրիկ երգիչը միշտ ապրել էր  
մարդկանց մէջ և գիտեր, թէ ինչպէս  
իրան սիրում են։ Նա արանց կասկածան-  
քի նստեց դէպի իրան երկարած ձեռքի  
վրայ։ Բայց յանկարծ տեսաւ դէպի իրան

ուղղւած նախանձով և չարութեամբ լի  
մի հայեացք և նոյն բոպէին զգաց, թէ  
ինչպէս իր փափուկ մարմինը սեղմում են  
ամուր և չար մատները։ Յուսահատ՝  
թպրտաց, պոկւեց իր բոլոր թափով և  
արձակեց նոյնիսկ մի այնպիսի անսպա-  
սելի ճիչ և այնպիսի տանջանքով վըշ-  
տով, որ մարդ վախից ակամայ բացեց  
իր ձեռքը, նոյն բոպէին մի ինչ որ հրա-  
շալի բան փայլեց նրա առաջ և անյայ-  
տացաւ ծառերի մութ կանաչների մէջ,  
անյայտացաւ ընդ միշտ...

Եւ ահա հէնց այդ վայրկեանից, երբ  
նա հանդիպեց նախանձին և չարութեան,  
քաղցրահնչիւն երջանկութիւնը դադարեց  
մարդկանց մէջ ապրելուց։

— Ես նրանց չարութիւն չէի պատճա-  
ռում։ Նրանց համար էին հնչում իմ ամե-  
նալաւ երգերը, իսկ նրանք՝ նրանք ջախ-  
ջախեցին իմ հրաշալի թևերը։ Ես գեն-

կարող եմ երգել, միայն թէ նրանք ինձ  
չեն տեսնելու այլիս:

Այդ ժամանակից սկսած՝ միայն հեռ-  
վից էին հնչում մարդկանց համար եր-  
ջանկութեան հրաշալի երգերը: Լսելով  
նրանց, մարդիկ գնում էին ընդառաջ,  
բայց որքան առաջ էին գնում, երգի ձայ-  
նը հնչում էր նոյնքան հեռու... Եւ այն  
ժամանակ մարդկանց թւում էր, որ այդ  
հրաշալի երգը հնչում է հէնց իրանց սըր-  
տերում: Բայց երգը ընդհատում էր և  
ձայնը դադարում էր երգելուց նրանց  
ներսում: Երջանկութիւնն էր, որ թուչում  
էր հեռու, հեռու...

Երջանկութիւնը ամենից աւելի սիրում  
էր երեխաներին, այդ անմեղ արարած-  
ների պարզ, երկնագոյն աչքերը՝ իրանց  
գոյնով յիշեցնում էին նրան հրաշալի  
պարտէզի երկնագոյն լազուրը: Յաճախ,  
աննկատելի կերպով, գիշերը, Երջանկու-

թիւնը սողոսկում էր երեխայի սենեակը,  
նստում նրա մնարին և երգում էր իր  
քաղցրահնչիւն երգերը: Արթնանալով ե-  
րեխաները լայն բաց էին անում իրանց  
զարմացած աչքերը, և տեսնելով մթու-  
թեան մէջ փայլող Երջանկութեան փե-  
տուրները, ժպտալով ձգւում դէպի նա:

Դա նրանց ցանկութիւնն է, երկնքից  
լուսինը վեր բերել... ասում էին այն ժա-  
մանակ հանաքով երիտասարդ մայրերը...

Երգելով իր հրաշալի երգերը, Երջան-  
կութիւնը նորից թուչում, հեռանում էր:

Երբ նա տեսնում էր ջահել աղջիկներ  
և պատանիներ, լի հաւատքի և յոյսի  
հայեացքներով, Երջանկութիւնը թառում  
էր նրանց մօտ և նրանց գլուխների վը-  
րայով հնչեցնում էր երգի ներգաշնակ ե-  
լլէջները:

Օ՛, մքան քաղցր էր թւում այն ժա-  
մանակ նրանց համար կեանքը:

ՄԵՆՔ յաւիտեան երջանիկ կը լինենք  
մենք յաւիտեան կը սիրենք, —ասում  
էին այն ժամանակ պատանիները և աղ-  
ջիկները միմիանց:

Էինում էին նոյնպէս մարդիկ, որ իմա-  
նալով ինչ բան է կեանքը, երբեմն նոյն-  
պէս նշմարում էին իրանց առաջից թոշող  
անցնող երջանկութիւնը: Բայց, փոխա-  
նակ ամբողջ հոգով անձնատուր լինելու  
նրա մեղեղիներին, աշխատում էին յաւ-  
տեսնել նրա գեղեցիկ փետուրները և նը-  
կատում էին նրա տրորւած, ջարդւած  
թերը: Հեռւից այդ թոշնակը երեւմ էր  
շատ աւելի գեղեցիկ, ասում էին նրանք:  
Ո՞րքան տարօրինակ է դա: ՄԵՆՔ առաջ  
չէինք նկատում ջարդւած, փետուրները:  
Իսկ նրա զւարթ երգերի մէջ երբեմն հըն-  
չում էին տանջանքի և վշտի շեշտեր: Ոչ,  
երկի դա այն երջանկութիւնը չէ, որի  
մասին պատմում էին մեզ մեր հայրերը

և պապերը, երբ պալրում էին հրաշալի  
ծաղկավթիթ պարտէղում: Հարկաւոր է  
ասել մեր զաւակներին, որ նրանք գնան  
փնտրելու այն միակ իսկական, հրաշալի,  
քաղցրահնչիւն երջանկութիւնը:

Եւ պատմում էին այդ մասին իրանց  
զաւակներին և թոռներին:


Շատերը ուղերուում էին որոնելու եր-  
ջանկութիւնը, և պատահում էր, որ ճա-  
նապարհում նրանք գտնում էին գեղեցիկ,  
փայլուն փետուրներ, որոնց, երբեմն,  
սահող անցնող երջանկութիւնը վայր էր  
գցում երկրի վրայ:


Մարդիկ նրանց անւանում էին՝ սէր,  
հոչակ, հարստութիւն: Դրանք մեծու-  
թեամբ և տեսարաններով զանազան էին:  
Բայց շատ յաճախ պատահում էր, որ նը-  
րանք գտնում էին միայն մի-մի փետուր:  
Իսկ մարդիկ երազում էին գտնել երջան-

կութիւնը իր նախկին անարատ ամբողջ  
գեղեցկութեամբ:

Ահա ինչու նրանք միշտ ու անդադար  
խօսում էին նրա մասին և սպասում, թէ  
երբ նորից նա կը վերադառնայ երկրի  
վրայ:







ՀՀ Ազգային գրադարան



NL0319836

12.171

